



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

★

MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Bishop Torkom Manougian, Primate

Առաջնորդ

Թիւ 20260

Փետրուար 16, 1968

Արժանաշնորհ  
Տ. Արսէն Զհնյ. Պարսամբան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յակոբ Եկեղեցւոյ  
եւ Նախագահ Մխական Խորհուրդի  
Ռիչմոնտ.

Սիրելի Տէր Արսէն,

Ստացած ենք 1968 Փետրուար 14 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 21ին գումարուած Ձեր Մխական Ժողովին մէջ կատարուած է Մխական Խորհուրդի վից անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Մխական Ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Մխական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Ըստ Առաջնորդարանի մէջ եղած արձանագրութեան Ռիչմոնտի համայնքի Թեմական Պատգամաւորներն են Անդրանիկ Կարապետեան եւ Ալիս Տարհանեան, իսկ Ձեր վերոյիշեալ տեղեկագրին մէջ կու տաք անունը Արաքսի Գրիգորեանի իբրեւ Թեմական պատգամաւոր: Հաճեցէք այս պարագան ստուգել:

Օրհնելով Մխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյն եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Տիարք՝ Սամուէլ Պարոնեան  
Փիթեր Կրին  
Կիւլլըր Երեցեան  
Ռիլիքմ Տարհանեան  
Վահէ Կարապետեան  
ձան Մէյսըն /մէկ տարուայ շրջանով/